

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀՇՁԲ-19/15**

ք. Երևան

« 19 » դեկտեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրի կատարման համար Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայությունների դիմաց առաջարկված միավոր գների հանրագումարը կազմում է 36 968 880 (երեսունվեց միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն (ՄԳ): Ծառայությունների դիմաց վճարումն իրականացվելու է 0,6 գործակցով (ՄԳ/ՆԳ) և կազմելու է առավելագույնը 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախադրեալվելու դեպքում Կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տուգանք՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
«Ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝



(ստորագրություն)
Կ.Տ. 

ԿԱՏԱՐՈՂ՝

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուփինյանց փ. 31
«Արարատքանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 00873228

Տնօրեն՝



(ստորագրություն)
Կ.Տ. 



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
.1	50111130/501		դրամ	2 400 000	1	ք. Երևան	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2020թ.

- * 1. Տեխնիկական բնութագիր-գնացուցակը ներկայացվում է Հավելված N 1.1-ով
2. Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:
3. Ծառայությունները պետք է մատուցվեն Երևան քաղաքում
4. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում և առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում:
5. Կատարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և քսայուղեր:
6. Տեխնիկական սպասարկման կայանը պետք է ունենա ստորև նշված նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխնիկական սպասարկում իրականացնելու համար.
- Տաքացվող բոքսեր ամբարձիչների վրա նշված ծառայությունների մատուցման հնարավորությամբ,
 - Դողերի քանդման հավաքման և հավասարակշռման ստենդ,
 - Անվաքացքի կարգավորման ստենդ,
 - Լուսարձակների կարգավորման ստենդ,
 - Էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն,
 - Առնվազն 1-ական ավտոփականագործ, շարժիչագործ, ավտոէլեկտրիկ, ինժեկտորային մասնագետ, անվաքացքի ուղղման մասնագետ,
 - Ախտորոշման /դիագնոստիկ սարք նշված ավտոմեքենաների ծրագրով,
 - Կատարողը պետք է ունենա հնարավորություն կատարելու շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի ընթացային մասի և թափքի ինչպես ընթացիկ այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝


Վ. Լուսյան
(ստորագրություն)



ԿԱՏԱՐՈՂ՝

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 151001274550100
ՀՎՀՀ 00873228

Տնօրեն՝


Վ. Լուսյան
(ստորագրություն)



Տեխնիկական բնութագիր-Գնացուցակ

« Հրամ

Հ/Հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տոյոտա Կորոլլա 1,6 GAS /2010թ./	Տոյոտա Կորոլլա 1,6 /2010թ./	Հունդայի Գրանդերո /2013թ./	Կիա Օպտիմա /2013թ./	Հունդա Ակորդ /2013թ./
1	2	3	4	5	6	7
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը						
1	Բնկման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
2	Սառեցման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
3	Յուղման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
4	Արտաքին համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
5	Կցորդման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
11	ABS համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
14	Թափքի վիճակի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
15	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000
SU-2 ներառվող ծառայությունների անվանումը						
16	Շարժիչի հանում և տեղադրում	85,000	85,000	85,000	85,000	85,000
17	Շարժիչի վերանորոգում	320,000	320,000	320,000	320,000	320,000
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40,000	40,000	40,000	40,000	40,000
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	42,000	42,000	42,000	42,000	42,000
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	65,000	65,000	65,000	65,000	65,000
23	Փակակի խցուկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	45,000	45,000	45,000	45,000	45,000
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000	6,000
26	Հրիչի փոխարինում	3,500	3,500	3,500	3,500	3,500
27	Ատամնավոր փոկի փոխարինում	40,000	40,000	40,000	40,000	40,000
28	Փոկանիվի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000
29	Ձգող հուլովակի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
30	Ծակած և լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
31	Ծակած և լիսեռի հետևի խցուկի փոխարինում	70,000	70,000	70,000	70,000	70,000
32	Մխոցային օղակների փոխարինում	120,000	120,000	120,000	120,000	120,000
33	Թափանիվի հանում և տեղադրում	50,000	50,000	50,000	50,000	50,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
34	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000
35	Յուղի պոմպի փոխարինում	28,000	28,000	28,000	28,000	28,000
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	35,000	35,000	35,000	35,000	35,000
37	Բնկման կարգավորում	5,000	5,000	5,000	5,000	5,000
38	CO կարգավորում	5,000	5,000	5,000	5,000	5,000
39	Օդի գտիչի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000
40	Արահի գտիչի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
41	Ինժեկտորի ֆորսունկաի փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
42	Ինժեկտորի ֆորսունկաի մաքրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
43	Վառելիքի միջադիրների փոխարինում	13,000	13,000	13,000	13,000	13,000
44	Վառելիքի գտիչի փոխարինում	13,000	13,000	13,000	13,000	13,000
45	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
3. Սառեցման և արտաժաման համակարգ						
46	Հովհարի փոկի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
47	Հովհարի հանում և տեղադրում	12,000	12,000	14,000	14,000	14,000
48	Ռադիատորի հանում և տեղադրում	18,000	18,000	18,000	18,000	18,000
49	Ռադիատորի վերանորոգում	50,000	50,000	50,000	50,000	55,000
50	Թերմոստատի փոխարինում	12,000	12,000	12,000	12,000	12,000
51	Ջրի պոմպի փոխարինում	15,000	15,000	12,600	13,200	18,000
52	Ընդարձակող բաքի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
53	Խլարարի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
54	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4,000	4,000	4,000	4,000	4,000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ						
55	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
56	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	20,000	20,000	20,000	20,000	20,000
57	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	50,000	50,000			
58	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	15,000	15,000			

59	Վազքայափի շարժաբերի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000
60	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	50,000	50,000	50,000	50,000	50,000
61	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	50,000	50,000	50,000	50,000	50,000
62	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	65,000	65,000	65,000	65,000	65,000
63	ԱՓՏ-ի վերանորոգում	450,000	450,000	450,000	450,000	450,000
64	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	25,000
5. Առջևի և հետևի կամրջակներ						
65	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	50,000	50,000	50,000	50,000	50,000
66	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	50,000	50,000	50,000	50,000	50,000
67	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	50,000	50,000	50,000	50,000	50,000
68	Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում	25,000	25,000	25,000	25,000	25,000
69	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
6. Կախոց						
70	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	70,000	70,000	70,000	70,000	70,000
71	Տրավերսի հանում և տեղադրում	35,000	35,000	35,000	35,000	35,000
72	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում	14,000	6,000	6,000	8,000	6,000
73	Անվակունդի առանցքակալի փոխարինում	14,000	10,000	10,000	13,000	10,000
74	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8,000	8,000	8,000	10,000	8,000
75	Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
76	Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
77	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
78	Ջսպանակի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
79	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
80	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
81	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
82	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
83	Միջին ձգանի հանում և տեղադրում	9,500	9,500	9,500	9,500	9,500
84	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
85	Վերևի լծակի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
86	Վերևի լծակի վռանների փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
87	Գնդե հողակալերի փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
88	Ծայրականների հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
89	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
90	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
91	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
92	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	1,500	1,500	1,500	1,500	1,500
93	Հետևի զսպանակի փոխարինում	6,000	6,000	6,000	7,000	6,000
94	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6,000	6,000	6,000	6,000	6,000
95	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	3,500	3,500	3,500	4,500	3,500
96	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
97	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
98	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
99	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
100	Անվաքացքի կարգավորում	5,000	5,000	5,000	6,000	5,000
101	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	5,000	1,000	1,000	1,000	1,000
7. Ղեկային մեխանիզմ						
104	Ղեկային կալունի հանում և տեղադրում	20,000	20,000	20,000	20,000	20,000
105	Ղեկային կալունի վերանորոգում	60,000	60,000	80,000	80,000	80,000
106	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	12,000	12,000	12,000	12,000	12,000
107	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
108	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
109	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
110	Հիդրոուժեղարարի փոխարինում հանում և տեղադրում	9,000	9,000	9,000	9,000	9,000
111	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
112	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	45,000	45,000	45,000	45,000	45,000
8. Արգելակային համակարգ						
113	Գլխ. գլանի հանում և տեղադրում	16,000	16,000	16,000	16,000	16,000
114	Գլխ. գլանի վերանորոգում	16,000	16,000	16,000	16,000	16,000
115	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
116	Բանվ. գլանի հանում և տեղադրում	12,000	7,000	7,000	7,000	7,000
117	Բանվ. գլանի վերանորոգում	13,000	13,000	13,000	13,000	13,000
118	Արգելակային համակարգի օդահանում	3,000	3,000	3,000	3,000	3,000
119	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
120	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
121	Առջևի սուպպորտի վերանորոգում	8,000	8,000	8,000	8,000	8,000
122	Հետևի սուպպորտի վերանորոգում	8,000	8,000	8,000	8,000	8,000
123	Արգելակային փողրակի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	4,000
124	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
125	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
126	Հետևի կոճղակների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
127	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5,500	5,500	5,500	5,500	5,500
128	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5,500	5,500	5,500	5,500	5,500
129	Արգելակային սկավառակի հղկում	9,000	9,000	9,000	9,000	9,000

* 130	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	13,000	13,000	10,000	10,000	10,000
131	ABS-ի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000
132	ABS-ի վերանորոգում	10,000	10,000	10,000	10,000	10,000
133	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
134	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	10,000	10,000	10,000	10,000	10,000
9. Էլեկտրասարքավորում						
135	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10,000	10,000	10,000	10,000	10,000
136	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
137	Գններատորի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
138	Գններատորի վերանորոգում	20,000	20,000	20,000	20,000	20,000
139	Մեկնարկիչի հանում և տեղադրում	12,000	12,000	12,000	12,000	12,000
140	Մեկնարկիչի վերանորոգում	20,000	20,000	20,000	20,000	20,000
141	Առցևի լապտերի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000
142	Հետևի լապտերի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000
143	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	7,000	7,000	7,000	7,000	7,000
144	Վազքաչափի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
145	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
146	Սարքերի պանելի հանում և տեղադրում	60,000	60,000	60,000	60,000	60,000
147	Արագաչափի հանում և տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
148	Ազդանշանի հանում և տեղադրում	8,000	8,000	8,000	8,000	8,000
149	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	14,000	14,000	14,000	14,000	14,000
